ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.09.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/125

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.08.2018թ. թիվ 01.1/26-3/15357-18 և 18.09.2018թ. 01.1/26-/[1256766]-18 գրություններով Ա/Ձ Հրայր Մանուկյանին և «Արցախ Կաթ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 13.08.2018թ. թիվ ԴՎԱ/3049 և 14.09.2018թ. թիվ ԴՎԱ/3475 գրությունների հիման վրա, 27.08.2018թ. թիվ 01.1/26-3/15357-18 և 18.09.2018թ. 01.1/26-/[1256766]-18 գրություններով դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Հրայր Մանուկյանին և «Արցախ Կաթ» ՓԲԸ-ին

(այսուհետ՝ Կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Հրայր Մանուկյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ա/Ձ Հրայր Մանուկյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/125 ընթացակարգի շրջանակներում 30.08.2018թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ պայմանագրով նախատեսված ապրանքը Ա/Ձ Հրայր Մանուկյանի կողմից չի մատակարարվել տեխնիկական խնդիրների պատճառով:

3. **<u>«Արցախ Կաթ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Արցախ Կաթ» ՓԲԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Արցախ Կաթ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/125 ընթացակարգի շրջանակներում 30.08.2018թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.08.2018թ. թիվ ԴՎԱ/3049 և 14.09.2018թ. թիվ ԴՎԱ/3475 գրություններով հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Հրայր Մանուկյանի և «Արցախ Կաթ» ՓԲԸ-ի կոնսորցիումի (այսուհետ՝ Կոնսորցիում) միջև 06.11.2017թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-7/89-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերության պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 09.08.2018թ.

միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը և դրան կից 16.04.2018թ. կնքված թիվ 1 համաձայնագիրը:

Նշված գրությամբ Պատվիրատուն հայտնել է նաև, որ Պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 10.08.2018թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/125 ընթացակարգի շրջանակներում 30.08.2018թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. ՍՑ-ԱՄ-2018/125 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/125 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Հրայր Մանուկյանի և «Արցախ Կաթ» ՓԲԸ-ի կոնսորցիումի միջև 06.11.2017թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-7/89-1» գնման պայմանագիրը, որի համաձայն Կոնսորցիումը պարտավորվել է Պայմանագրի տեխնիկական բնութագիր- գնման ժամանակացույցին համապատասխան Պատվիրատուին մատակարարել համապատասխան ապրանք:

2. Ա/Ձ Հրայր Մանուկյանին ուղղված 10.08.2018թ. թիվ ԴՎԱ/3021 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը և դրան կից 16.04.2018թ. կնքված թիվ 1 համաձայնագիրը:

6. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.08.2018թ. թիվ 01.1/26-3/15357-18 և 18.09.2018թ.

01.1/26-/[1256766]-18 գրությունները, ՀՀ պաշտպանության նախարարության 13.08.2018թ. թիվ ԴՎԱ/3049 և 14.09.2018թ. թիվ ԴՎԱ/3475 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 405-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ համատեղ գործունեության (կոնսորցիում) դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է, և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Հրայր Մանուկյանի և «Արցախ Կաթ» ՓԲԸ-ի կոնսորցիումի միջև 06.11.2017թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-7/89-1» գնման պայմանագիրը:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետով վաճառողը (Կոնսորցիումը) պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին (ՀՀ պաշտպանության նախարարություն) մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական գնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար՝ համաձայն թիվ 2 հավելվածի (վճարման ժամանակացույց):

Պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսվել է, որ ապրանքների մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում:

ՀՀ պաշտպանության նախարարության և Կոնսորցիումի միջև 16.04.2018թ. կնքվել է Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, որի համաձայն Կոնսորցիումը պարտավորվել է Համաձայնագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետներում մինչև 18.12.2018թ. Պատվիրատուին մատակարարել ընդհանուր 118 450 կգ «մածուն՝ կովի կաթից (Մածուն)» ապրանքատեսակը (այսուհետ՝ ապրանք):

Համաձայնագրի թիվ 1 հավելվածով նախատեսվել է ապրանքի մատակարարման հետևյալ ժամանակացույցը՝ 2018թ. ապրիլ-օգոստոս ամիսների համար.

Հ/Մ	ապրիլ			մայիս				հունիս				հուլիս					օգոստոս			
կգ		**25.04.2018թ.**	**30.04.2018թ**	**07.05.2018թ.**	**14.05.2018թ.**	**21.05.2018թ.**	**28.05.2018թ**	**05.06.2018թ**	**12.06.2018թ.**	**19.06.2018թ.**	**26.06.2018թ.**	**03.07,2018թ.**	**10.07.2018թ.**	**17.07.2018թ.**	**24.07.2018թ.**	**31.07.2018թ.**	**07.08.2018թ**	**14.08.2018թ.**	**21.08.2018թ.**	**28.08.2018թ**
կգ		1900	1900	1900	1900	1900	1900	1900	1900	1900	1900	1900	1900	1900	1900	1900	1900	1900	1900	1900
կգ		640	640	640	640	640	640	640	640	640	640	640	640	640	640	640	640	640	640	640
կգ		810	810	810	810	810	810	810	810	810	810	810	810	810	810	810	810	810	810	810

Համաձայն 16.06.2018թ., 23.07.2018թ., 24.07.2018թ. կնքված ի պահ ընդունման թիվ 314, 315, 465, 472 ակտերի՝ Ա/Ձ Հրայր Մանուկյանի կողմից 16.06.2018թ., 23.07.2018թ. և 24.07.2018թ. մատակարարվել է համապատասխանաբար 640 կգ, 1900 կգ, 1900 կգ, 810 կգ ապրանք:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 22.06.2018թ. կազմված թիվ 13 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Հրայր Մանուկյանի կողմից 22.06.2018թ. մատակարարվել է՝

1. մածուն (կովի կաթից)- 640 կգ
2. մածուն (կովի կաթից)- 1900 կգ

Նույն արձանագրության համաձայն՝ զորամասի ներքին ստուգող հանձնաժողովի կողմից իրականացված արտաքին զննության արդյունքում ուսումնասիրված 280 տուփերից 17-ը գտնվում էին գործարանային փաթեթավորումը խախտված վիճակում, մասնավորապես տուփերի վրայի փաթիթեղները բացված էին:

Արձանագրության համաձայն՝ վերոհիշյալ նյութական միջոցները չեն համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին, որի հետևանքով խմբաքանակը հետ է վերադարձվել մատակարարին:

Ա/Ձ Հրայր Մանուկյանին ուղղված 10.08.2018թ. թիվ ԴՎԱ/3021 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ Կոնսորցիումի կողմից Պայմանագրի համաձայն պետք է մատակարարվեր ընդհանուր 118 450 կգ «մածուն՝ կովի կաթից (Մածուն)» ապրանքատեսակը, որից 46 900 կգ՝ մինչև 24.07.2018թ., սակայն մինչև նշված օրը մատակարարվել է ընդամենը 5250 կգ:

Նշված գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերության պահանջը՝ Պայմանագրի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով 09.08.2018թ. միակողմանի լուծել է Պայմանագիրը և դրան կից 16.04.2018թ. կնքված թիվ 1 համաձայնագիրը:

Այսպես՝ ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Հրայր Մանուկյանի և «Արցախ Կաթ» ՓԲԸ-ի կոնսորցիումի միջև 06.11.2017թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-7/89-1» գնման պայմանագիրը, իսկ այնուհետև 16.04.2018թ. կնքվել է Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, որի համաձայն Կոնսորցիումը պարտավորվել է Համաձայնագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետներում մինչև 18.12.2018թ. Պատվիրատուին մատակարարել ընդհանուր 118 450 կգ «մածուն՝ կովի կաթից (Մածուն)» ապրանքատեսակը (այսուհետ՝ ապրանք): Ընդ որում՝ գնման ժամանակցույցի համաձայն՝ կոնսորցիումը պարտավորվել է համապատասխան քանակի մատակարարումներն իրականացնել ըստ համապատասխան ամիսների հստակ օրերի:

Մասնավորապես գնման ժամանակացույցի համաձայն՝ Կոնսորցիումը 24.07.2018թ. դրությամբ Պատվիրատուին պետք է մատակարարել ընդհանուր՝ 46 900 կգ ապրանք, մինչդեռ Կոնսորցիումի կողմից մատակարարվել էր ընդամենը 5 250 կգ ապրանք:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն ենթակետի 2.1.7.1 կետի «բ» պարբերության համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Հրայր Մանուկյանի և «Արցախ Կաթ» ՓԲԸ-ի կոնսորցիումը թույլ է տվել 06.11.2017թ. թիվ «ԳՀԱՊՁԲ-7/89-1» պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» պարբերությամբ նախատեսված էական խախտում, որի հետևանքով Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը, քանի որ Կոնսորցիումի կողմից մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի:

Պայմանագրի 8-րդ կետի 8.1.2-րդ ենթակետով սահմանվել է, որ քանի որ Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիում) պայմանագիր կնքելու միջոցով «Արցախ Կաթ» ՓԲԸ-ի հետ, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 360-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ պարտավորությանը մասնակցում են մի քանի պարտատեր կամ մի քանի պարտապան, պարտատերերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել կատարելու պարտավորությունը, իսկ պարտապաններից յուրաքանչյուրը պարտավոր է այն կատարել մյուսների հետ հավասար բաժնով, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ պարտավորության պայմաններից:

Նույն օրենսգրքի 361-րդ հոդվածի համաձայն՝

1. Համապարտ պարտականությունը (պատասխանատվությունը) կամ համիրավ պահանջը ծագում է, եթե պարտականության համապարտությունը կամ պահանջի համիրավությունը նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով, մասնավորապես, եթե անբաժանելի է պարտավորության առարկան:

2. Ձեռնարկատիրական գործունեության հետ կապված պարտավորությամբ մի քանի պարտապանների պարտականությունները համապարտ են, իսկ պարտատերերի

պահանջները՝ համիրավ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պարտավորության պայմաններով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ կոնսորցիումի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պայմանագիրն իրականացվել է համատեղ գործունեության (կոնսորցիում) պայմանագիր կնքելու միջոցով՝ գտնում եմ, որ Ա/Ձ Հրայր Մանուկյանի և «Արցախ Կաթ» ՓԲԸ-ի կողմից թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.08.2018թ. թիվ 01.1/26-3/15357-18 և 18.09.2018թ. 01.1/26-/[1256766]-18 գրություններով Ա/Ձ Հրայր Մանուկյանին (ՀՎՀՀ՝ 92103429) և «Արցախ Կաթ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 90010282) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Հրայր Մանուկյանին և «Արցախ Կաթ» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ